այլազգիք ոչ մատուցանէին ունկն բանից նոցա, որոյ վասն հարկ եղեւ վասլի դիմել 'ի դուռն, և մատուցանել գիր աղաչանաց առ Մելիք Մհհեմմէտ ապուլ Ֆաղլ, և հրովարտակաւ ստանձել զրօնութիւնս այլազգեաց. եւ նորա հաճեալ ընդ բանս նորա գրեաց առ զօրապետն և առ այլ գործակալս Պաղեստինոյ, բառնալ զայդպիսի նեղութիւնս 'ի քրիստոնէից, և չպահանջել տուրս 'ի դուռն Ս. Յարութեան յեպիսկոպոսաց, 'ի վարդապետաց և 'ի ժողովրդոց, եւ պատուիրէ վարիլ ըստ մտաց առաջին հրովարտակին. ՎԼՂ (1341):

Մարինոս Լատին յառաջ բերէ 'ի պատմութեան Ս. Երկրին, թէ միջնորդութեամբ Ռոպերթոս թագաւորին Սիկիլիոյ առ Սուլթանս եգիպտոսի, վերստին դարձան Ֆրանչիսկեան կրօնաւորք յերուսաղէմ եւ բնակեցան 'ի վանս Սիոնի, (1313). Թէպէտ և ասէ, հալածեցան անտի ժամանակ առ ժամանակ, այլ վերստին ժողովեցան: Սակայն չեղեւ տեւական, յետոյ եւս հալածեցան և տանջեցան խիստ, որպէս ունիմք յիշել 'ի կարգի բանիցս: Եւ թէ չորս քահանայք նոցին նահատակեցան 'ի տաճարին Սողոմոնի, ուր քարոզէին զԱւետարանն, և մերմինք նոցա արկան 'ի հուր յայլազգեաց, (1331): Եւ թէ 12 կրօնաւորք կոտորեցան 'ի վանս Սիոնի (1368): Սակայն այլք 'ի Լատին պատմագրաց, ասեն թէ 1318 էն մինչեւ 1321 մի քանի նուաստ կրօնաւորք և Սարկաւագունք բնակէին յՆիկղեցին Ս. Յարութեան, որ և նոքա զկնի տուղ ժամանակի, ոչ միայն զՍ. Գերեզմանն Քրիստոսի, այլ նաեւ զՍ. Քաղաքն Թողեալ 'ի բաց գնացին: Միջնորդութիւն Ռոպերթոս թագաւորին, և զդարձ Ֆրանչիսկեան կրօնաւորաց դնեն յամի Տեառն 1342:

Սարգիս վարդապետ որդի Տմախի գնեաց 'ի սմին ժամանակի տուն մի 'ի թաղն Սիոնի, մերձ 'ի վանս Սուրբ Փրկչի՝ յայլազգեաց, և յետ տարւոյ միոյ դարձոյց զայն 'ի վերայ Կարապետ վարդապետ Պատրիարքի, եւ ապա կտակաւ ետանդ լինել կալուած վանացս Ս. Յակոբայ, և պատուիրէ չմոռնալ զկտակն և չվաճառել, ոչ ոք լիցի եպիսկոպոս 'ի վանս Ս. Յակոբայ, այլ պահել և յանձնել զայն յաջորդին իւրոյ, որպէս յայտ առնէ զայս մուրհակ